

Խոսքային ներազդումը որպես իրավաբանական խոսույթի  
ռազմավարություն

Abstract

The present paper discusses some strategies of the speech impact focusing on the implementation of linguistic and psychological factors in legal discourse. It also highlights stylistic, pragmalinguistic, cognitive and other communicative factors shaping the role and the importance of the speech impact in legal discourse.

Keywords: Speech impact, legal discourse, pragmatics

Ամփոփում

Սույն հոդվածը քննարկում է խոսքային ներազդման որոշակի ռազմավարություններ՝ ուշադրությունը մասնավորապես կենտրոնացնելով հոգեբանական և լեզվաբանական գործոնների վրա, որոնք կիրառվում են իրավաբանական խոսույթում:

Բանալի բառեր: Խոսքային ներազդում, իրավաբանական խոսույթ, Խոսքային ռազմավարություն

Резюме

В настоящей статье исследуются основные теории касательно понятия “речевое воздействие”, освещаются и интерпретируются некоторые стратегии, используемые в юридическом, а именно в судебном дискурсе.

Ключевые слова: речевое воздействие, юридический дискурс, речевые стратегии, судебный дискурс.

Վերջերս հետազոտողները խոսում են <<խոսքային ներազդում>> հատուկ գիտության գոյության մասին. մի շարք հետազոտողների աշխատություններում ի հայտ են գալիս ընդհանրացնող բնույթի ուսումնասիրություններ (Օ. Իսսերս, Ա.

Леонтьев, В. Петренко և այլն): <<Խոսքային ներագրում>> հասկացությունը ներմուծվել է 1970ականների սկզբին մոսկովյան դպրոցի հոգելեզվաբանների կողմից:

Խոսքային ներագրման մասին գիտությունը համարվում է “ինտեգրված” գիտություն, որը միավորում է կից գիտությունների մի ամբողջական համալիր՝ ավանդական համակարգային լեզվաբանություն, հոգելեզվաբանություն, պրագմալեզվաբանություն, խոսույթային լեզվաբանություն, ոճաբանություն, հոգեբանություն, զանգվածային հաղորդակցման տեսություն: Այն միջառարկայական է և կիրառում է տարբեր գիտությունների մեթոդներ: Նրա բազային պատկանելությունը կարելի է համարել հաղորդակցական լեզվաբանությունը:

<<Խոսքային ներագրում>> հասկացությունը չափազանց լայն է և անբաժան խոսույթի հասկացությունից: Հետազոտողի խնդիրն է զանազանել լեզվական միջոցները, որոնց օգնությամբ խոսքային ներագրումը իրականանում է հաղորդակցման իրական գործընթացում, և բացահայտել դրանց իրականացման մեխանիզմները: Այս երևույթի վերլուծության հոգելեզվաբանական մոտեցման արժեքը կարելի է համարել խոսքային ներագրման գործընթացի հոգեբանական վերլուծության միավորման փորձը խոսքի բնութագրման լեզվաբանական միջոցների հետ: Այդ մոդելում ելակետային է “հոգեբանական ներագրման” հասկացությունը, որը սահմանվում է որպես շփման ակտ, որը դիտարկվում է նրա նախապես պլանավորված այս կամ այն նպատակաուղղվածության տեսանկյունից: Որպես կանոն, խոսքային ներագրումը ավելի բարդ գործունեության մի մաս է, ոչ խոսքային խնդրի հասանելիության միջոց և ունի հոգեբանական գործունեության կարգավիճակ (Леонтьев, 1979; Тарасов, 1998, Сорокин, 1990, Шахнарович, 1979 և այլն):

Դեպքերի ճնշող մեծամասնության ժամանակ խոսքային հաղորդակցությունը միակողմանի չէ: Խոսքային ներագրման վերջնական նպատակը մարդու գործունեության որոշակի կազմակերպումն է: Այդ տեսանկյունից հոգեբանական ներագրումը ուրիշի կամքին պասիվ ենթարկվելը չէ, այն ենթադրում է պայքար և դրդապատճառների նշանակության գիտակցական գնահատական, մի շարք հնարավորություններից՝ ավելի շատ կամ քիչ գիտակցված ընտրություն: Համոզման միջոցով ներագրման հաջողված լինելը կապված է հասցեատիրոջ գիտակցական դաշտի(կամ նրա հատվածի) սուբյեկտի մոդելավորման հետ, առանց դաշտի նշանակության փոփոխության: Խոսքային ներագրումը հենց խոսքային շփումն է, որը

վերցված է նրա նպատակաուղղվածության տեսանկյունից, այդ պատճառով խոսքային շփման վերլուծության մեթոդաբանական սխեմաները նույն խոսքային ներազդման վերլուծության սխեմաներն են : Խոսքային ներազդման վերլուծության հասկացական ապարատը ներառում է գործունեության տեսության այնպիսի տերմիններ, ինչպիսիք են գործունեության նպատակը, դրդապատճառը, գործողությունը, նշանակությունը, իմաստը և պայմանները: Խոսքային ներազդման առաջին և հիմնական նախապայմանը համարվում է խոսքային ներազդման օբյեկտի և սուբյեկտի գիտակցությունների ընդհանրությունը (Тарасов, 1998):

Այսպիսով, խոսքային ներազդումը կարող է սահմանվել որպես նպատակաուղղված բանավոր շփում, որի նպատակն է սուբյեկտի կողմից՝ օբյեկտի գիտակցության փոփոխությունը և/կամ վարքի կառավարումը:

Ռազմավարության հասկացությունը կարևորագույնն է խոսքային ներազդման ուսումնասիրության ժամանակ: Նրա լեզվաբանական վերլուծության հիմնական խնդիրը համարվում է խոսակցի ռազմավարությունների և նրա տրամադրության տակ գտնվող լեզվական բոլոր այն ռեսուրսների ուսումնասիրությունը, որոնցով պայմանավորված է նրա կողմից հաղորդակցման նպատակի հասանելիությունը (Исчерс, 1998):

Ժամանակակից աշխատություններում, որոնք առավելապես նվիրված են զանգվածային հաղորդակցման ժամանակ խոսքային ներազդման ուսումնասիրությանը, հաղորդակցական/խոսքային ռազմավարություններ և մարտավարություններ հասկացություններին, հաճախ չեն սահմանափակվում:

Խոսքային ներազդման ռազմավարությունը ընկալվում է որպես «տեղեկատվության գործածման մի եղանակ, որը նպատակ ունի փոխել օբյեկտի վարքը այն ուղղությամբ, որը նախապես պլանավորված է խոսքային ներազդման սուբյեկտի կողմից» (Олянич, 2007): Տվյալ սահմանումը ընդունվում է որպես հիմք, քանի որ պարունակում է պրոֆեսիոնալ հաղորդակցման ներազդման կարևորագույն հատկանիշները (նպատակի, օբյեկտի և սուբյեկտի առկայություն):

Ռազմավարության հասկացությունը, որը կիրառելի է հաղորդակցման ժամանակ, բարդ է և բազմամակարդակ: Ներազդման ռազմավարությունը (հաղորդակցման կամ խոսքային) կարող է դիտարկվել շփման մոդելում, որը կառուցված է <<սուբյեկտ-օբյեկտ>> սկզբունքով և ուղղված է որոշակի նպատակի

հասնելուն: Նույնքան բազմամակարդակ է նաև մարտավարության հասկացությունը, քանի որ մարտավարության հավաքագրումը հարաբերակցվում է ռազմավարություններից յուրաքանչյուրի հետ:

Ցանկացած խոսքային ռազմավարության վերջնական նպատակը հասցեատիրոջ աշխարհընկալման մոդելի փոփոխումն է: Մեծամասամբ գոյություն ունեն նպատակներին հասնելու մի քանի եղանակներ, որն էլ պահանջում է մարտավարություն հասկացության ներառումը:

Այսպիսով, հասկացությունների հիերարխիան ունի հետևյալ տեսքը՝ խոսքային ռազմավարություն (գերխնդիր, շփման ընդհանուր պլան) – խոսքային մարտավարություն (գործողություններ, որոնք ուղղված են ռազմավարության իրականացմանը) – հաղորդակցման ընթացք (գերխնդրի լուծման մեթոդները և եղանակները, խոսքային մարտավարության սահմանումներ) (Исчерс, 1998): Ընդհանուր առմամբ, մենք տարանջատում ենք հասկացությունների հարաբերակցության առաջարկված մեկնաբանությունը, քանի որ, մեր կարծիքով, հատկապես խոսքային մարտավարության ուսումնասիրության արդյունքում է, որ հնարավոր է լինում բացահայտել խոսքային իրական շփման ռազմավարությունները: Խոսքային ռազմավարական վերլուծության խնդրի համար ավելի գերադասելի է մեկնաբանողի դիրքորոշումը: Ռազմավարության հասկացությունը կարող է կիրառվել ինչպես հաղորդակցման ակտի (խոսքային իրադարձության) ամբողջության համար, այնպես էլ նրա առանձին փուլի համար:

Ըստ Իսսերսի՝ գործնական տեսանկյունից կարելի է առանձնացնել հիմնական (իմաստաբանական կամ ճանաչողական) և օժանդակ ռազմավարություններ (Исчерс, 1998): Որպես հիմնական ռազմավարություն դիտարկվում է այն ռազմավարությունը, որը ներագրման տվյալ պահին է ավելի նշանակալից՝ պրոֆեսիոնալ շփման մեջ և հարաբերակցվում է խոսքային ներագրման եղանակների հետ (ինչպես ընկալվում է հոգեկեզվաբանների կողմից): Օժանդակ ռազմավարության շարքին են դասվում պրագմատիկ (հաղորդակցա-իրավիճակային), տրամախոսական՝ երկխոսական (կոնսերվատիվ) և ճարտասանական ռազմավարության տեսակները: Նման մոտեցումը շատ արգասավոր է, քանի որ հնարավորություն է տալիս գնահատել հաղորդակցության ամբողջության և նրա առանձին բաղադրիչների արդյունավետությունը:

Պրոֆեսիոնալ հաղորդակցության հիմքում ընկած է արհեստավարժ շփումը: Արհեստավարժ շփման ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այն շատ հաճախ դիտարկվում է որպես մասնագետի նախապատրաստման կարևոր բաղադրիչ: Հաղորդակցական մասնագիտությունների շարքին են դասվում այնպիսիները, որոնցում գործնական շփման մեջ՝ մարդկանց խմբի կամ անհատի այս կամ այն բնութագրի փոփոխման նպատակով, տեղեկատվության փոխանակությունը հանդես է գալիս որպես պրոֆեսիոնալ գործունեության հիմնական միջոց (Тимофеев, 1995): Մասնագիտական ոլորտների մեջ, որոնք հետաքրքրում են լեզվաբաններին, կարելի է առանձնացնել հաղորդակցական ուղղվածություն ունեցողները, ինչպիսիք են մանակավարժության, իրավաբանության, բժշկության, սպասարկման, առևտրի, ինչպես նաև բիզնեսի և կառավարման ոլորտները:

Մարդկային գործունեության մեծ մասը իրականացվում է սոցիալական հաստատությունների շրջանակներում, որոնք կարգավորում և կազմակերպում են այդ գործունեությունը կանոնների և սահմանափակումների միջոցով: “Ինստիտուցիոնալ խոսույթը” <<շփման մասնագիտացված կլիշավորված տարատեսակ է այն մարդկանց միջև, որոնք կարող են չճանաչել միմյանց, բայց պետք է շփվեն տվյալ սոցիումի նորմերին համապատասխան>> (Карасик, 2002):

Ինստիտուցիոնալ շփումը ունի կարգավիճակա-դերային համաձայնեցված բնույթ, իսկ նրա հիմքը պաշտոնական շփումն է, այսինքն ֆորմալ, կանոնակարգված շփումը, որը հաղորդակցվողներից պահանջում է, որ նրանք խստորեն իրականացնեն իրենց սոցիալական դերը (Колтунова, 2005): Իրավաբանական խոսույթը առանձնանում է ինստիտուցիոնալ խոսույթի համակարգում, նրա համակարգաձևավորող առանձնահատկությունները հանդիսանում են քրոնոտոպը (ժամանակը և տեղը, որը տիպիկ է իրավաբանական երկխոսությանը), նպատակը (սոցիալական համակարգի գործունեության կարգավորումը, հասարակական հարաբերությունների կարգավորումը, որոշակի ազատությունների և պատասխանատվության ամրապնդումը, սոցիալական համակարգի համապատասխանության ապահովումը գերիշխող արժեքների և իդեալների հետ) և ռազմավարությունները (բացահայտումը, կարգավորումը, վերահսկողությունը, կարգադրությունը, կազմակերպումը): Խոսույթի տվյալ ինստիտուցիոնալ ձևությամբ

դիտարկվում է հաղորդակցական դերերի փոփոխականություն՝ կախված շփման իրավիճակի առանձնահատկություններից:

Հաղորդակցային մոտեցումը իրավաբանական խոսույթի ուսումնասիրության մեջ հանդիսանում է հեռանկարային և նշանակալից, քանի որ հաշվի է առնում ոչ միայն լեզվաբանական, այլ նաև արտալեզվաբանական գործոններ, որը թույլ է տալիս բացահայտել իրավական հաղորդակցության կարևոր ասպեկտները:

Դեռևս հին ժամանակներից իրավաբանական տեսության մեջ առկա է եղել իրավունքի հաղորդակցական բնույթի նշանակության իմաստավորման միտումը: Լեզուն՝ լեզվական հաղորդակցման կառուցվածքում դիտվում է արդեն ոչ թե որպես գործիք, այլ որպես իրավունքի կեցության հիմնական ձև: Իրավունքի դիտարկումը հաղորդակցման տեսանկյունից ներկայացված է ինչպես լեզվաբանների (Голев, 2005, Горошко, 2005 և այլն), այնպես էլ իրավագետների (Любимов, 2001, Поляков, 2001, Усманова, 2005 և այլն) գիտական աշխատություններում:

Իրավագիտության մեջ իրավունքը սահմանվում է որպես հաղորդակցության հատուկ ձև, որն ունի իր առանձնահատկությունը համեմատած այլ հաղորդակցական գործունեության տարատեսակների հետ: Իրավունքի հաղորդակցական ասպեկտի ըմբռնումը հանգեցնում է այն բանին, որ այն դիտարկվում է որպես հարաբերությունների համակարգ, որի սուբյեկտները իրավական տեղեկատվություն են ստանում նախնական իրավական տեքստերի մեկնաբանության միջոցով և փոխանցում են իրավական տեղեկատվությունը իրավական փաստաթղթերի միջոցով, որոնք ստեղծվում են սեփական պարտավորությունների և իրավունքների իրականացման արդյունքում: Հաղորդակցությունը ոչ միայն, ընդհանուր առմամբ, սոցիալական և, մասնավորապես, իրավունքի գոյության պայման է և ձև, այլ նաև հասարակական կյանքի գոյաբանական հիմք: Իրավունքը, այսպիսով, համարվում է և՛ որպես առանձնահատուկ սոցիալական լեզու, և՛ որպես սոցիալական փոխներազդման բազմակողմանի, ունիվերսալ միջոց, որն իրենից ներկայացնում է իրավական հաղորդակցման հաճախակի վերարտադրության գործընթաց (Поляков, 2001):

Ա. Ալեքսանդրովը, իմաստավորելով իրավունքի և արդարադատության լեզվական բնույթը, առաջարկում է զարգացնել այդ գիտական ուղղությունը դատական լեզվաբանության շրջանակներում, որն իր մեջ ներառում է

լեզվաբանության, ճարտասանության, իրավաբանության, հոգեբանության, փաստարկման տեսության, հոգեվերլուծության և այլ գիտությունների հիմքերը: Նա է հիմնավորել քրեական դատավարության բնույթի խոսույթային ըմբռնումը: Լեզուն, ըստ նրա, «իրավական հաղորդակցման օրգանական մաս է» / Александров, 2003/

Իրավական հաղորդակցությունը ձևավորվում է ըստ բնական իմացաբանական համակարգերի կերպի և նմանության: Բնական լեզուն իրավական հաղորդակցման օրգանական մաս է, մտնում է նրա կառուցվածքի մեջ, որպես խոսույթի բաղադրիչ, արտացոլում է (և մասամբ ձևավորում է) նրա շարքային մասնակիցների մտածելակերպը: / Голев, 2005/

Իրավական հաղորդակցությունը իր մեջ ներառում է մի շարք հատվող հաղորդակցական ենթահամակարգեր, այդ թվում նաև իրավական հաղորդակցման դատական ենթահամակարգը, որի մասնակիցները հաղիսանում են դերակատարները <<ժողովրդի կողմից>>՝ հայցվորը և պատասխանողը, և դերակատարները <<պետության կողմից >>՝ դատավորը, դատախազը և փաստաբանը: Դատական հաղորդակցական իրավիճակի անշունչ, բայց ոչ պասիվ մասնակիցներ են օրենքը, որի ետևում կանգնած է օրենսդիրը, որը օրենքի տեքստում ձևակերպում է ժողովրդի կամքը, և լեզուն իր տարբեր կարգավիճակներով:

Դատական խոսքային հաղորդակցությունը ընդհանուր իրավասության խոսքային շփման ակտերի ամբողջությունն է դատական իշխանության իրականացման գործընթացում, կողմերի խոսքային ներազդումն է, երկխոսությունն է՝ դատական իրավասության այս կամ այն տեսակի շրջանակներում: Խոսքային շփման, մեր դեպքում դատական, հիմքում ընկած է հաղորդակցական բազմակողմանի սխեման, որը մեկնաբանվում է հետազոտողների կողմից:

Լեզվական հաղորդակցության (դատալսում, դատական խոսք) մեջ լեզուն հանդես է գալիս որպես պոտենցիալ տեղեկատվության իսկական աղբյուր և պահոց: Դատարանի դահլիճում փաստերի մասին տեղեկատվության աղբյուրները և հաղորդողները մարդիկ են: Նրանք խոսում են անմիջականորեն (վկայություն են տալիս) կամ խոսում են հեռակա կարգով՝ գրավոր խոսքի միջոցով (հետաքննության վերաբերյալ արձանագրություններ, այլ գրավոր փաստաթղթեր) կամ խոսում են առարկաների՝ իրական ապացույցների փոխարեն (Александров, 2003): Խոսքային հաղորդագրության հասցեատերը դատական լսարանն է:

Դատալսումը տեղի է ունենում որոշակի «համատեքստում», որը կարելի է անվանել դատական իրավիճակ: «Համատեքստ» ասելով հասկանում ենք հանգամանքների այն ամբողջությունը, որոնցում տեղի է ունենում խոսքային հաղորդակցությունը, և գործոնները, որոնք ներազդում են կողմերի մեկնաբանությունների վրա:

Դատական իրավասության յուրաքանչյուր տեսակի նկատմամբ արդարադատությունը ներկայացնում է, դատարանի առջև հավասար կարգավիճակ ունեցող, սուբյեկտների միջև հակասությունների լուծման որոշակի մեթոդ:

Համոզումը և փաստարկումը միասնական հաղորդակցական գործընթացի անհրաժեշտ բաղադրիչներն են: Դատական ապացուցումը իր մեջ ներառում է ռացիոնալ փաստարկումը, ինչպես նաև բարոյական և զգացմունքա-հոգեբանական համոզումը: Այլ կերպ ասած, դատական ապացուցումը կարող է միահյուսվել համոզմանը խոսքի միջոցով: Հաղորդակցման խոսքի տեսանկյունից այն իրենից ներկայացնում է հոգեբանական, բարոյագիտական, զգացմունքային, ոճաբանական, էսթետիկական և այլ գործոնների բարդ միահյուսվածք տրամաբանական-ռացիոնալ գործոնների հետ, որոնք ուղղված են դատավորների և երդվյալ ատենակալների համոզման ձևավորմանը: Դատական գործընթացը դիտարկվում է որպես երկխոսություն, որը տարվում է նրա մասնակիցների միջև:

Բանավոր խոսքը անքակտելիորեն կապված է դատական իսկության խոսույթային էության հետ: Դատական իսկությունը դատալսման արդյունք է: Հետևաբար, բանավոր խոսքը և անմիջականությունը են դատական իսկության արտահայտման սկզբունք: Դատական ապացուցումը խոսքային իրադարձություն է, որը ստացվում է դատական խոսույթի մի շարք խոսքային ակտերի արդյունքում:

Պրոֆեսիոնալ՝ դատական հաղորդակցման նկատմամբ ռազմավարական մոտեցման իրավաբանական մեկնաբանությունը ենթադրում է խոսքային ռազմավարության մեկնաբանում որպես խոսքային վարքի գիծ, որն ընտրում է իրավաբանը հաղորդակցման խնդրի լուծման համար, խոսքային ներազդման ժամանակ իր նպատակներն իրագործելու համար: Խոսքի իրավաբանական հաղորդակցման ռազմավարական տարրերի շարքին կարելի է դասել նպատակի, իրավիճակի, շփման պայմանների, խոսքային իրավաբանական հաղորդակցման օբյեկտի ընտրությունը: Խոսքային իրավաբանական հաղորդակցման նպատակը



սոցիալական-խոսքային ներագոյման կանխատեսելի արդյունքն է, որի հասանելիությանն են ուղղված կողմերի ջանքերը: Նպատակը փոխկապակցված է իրավաբանի խոսքային գործունեության պարամետրերի և շփման իրավիճակի բնույթի հետ: Հաղորդակցական-խոսքային ռազմավարությունը բնութագրվում է հաղորդակցման գործընթացի մասնակիցների միջև որոշակի հարաբերությունների սահմանամբ և իրականացվում է մի շարք հաղորդակցա-խոսքային մարտավարությունների օգնությամբ (Усманова, 2005):

#### Գրականություն

1. Александров, А.С. Язык уголовного судопроизводства Текст.: дис. . доктора юрид. наук: 12.00.09 / А.С. Александров. Нижний Новгород, 2003. - 650 с.
2. Александров, А.С. Судебная драма Текст. / А.С. Александров // Юрислингвистика—7: Язык как феномен правовой коммуникации / Под ред. Н.Д. Голева. — Барнаул: Изд-во Алт. ун-та, 2005. С. 37-58.
3. Голев, Н.Д., Матвеева, О.Н. Лингвистическая экспертиза: на стыке языка и права / Н.Д. Голев, О.Н. Матвеева Текст. // Юрислингвистика-7: Язык как феномен правовой коммуникации / Под ред. Н.Д. Голева. Барнаул: Изд-во Алт. ун-та, 2005. - С. 168-185.
4. Горошко, Е.И. Судебная лингвистика: становление теоретической парадигмы Текст. / Е.И. Горошко // Юрислингвистика-7: Язык как феномен правовой коммуникации / Под ред. Н.Д. Голева. Барнаул: Изд-во Алт. ун-та, 2005. - С. 191-198.
5. Губаева, Т.В. Язык и право. Искусство владения словом в профессиональной юридической деятельности Текст. / Т.В. Губаева. — М.: Норма, 2004. 160 с.

6. Иссерс, О.С. Языковые средства и способы манипуляции сознанием / О.С. Иссерс Текст. // Семантика языковых единиц: Материалы межвуз. конф. -М.: Моск. гос. пед. ин-т, 1992. С. 52-54.
7. Иссерс, О.С. Основные предпосылки изучения речевых стратегий / О.С. Иссерс Текст. // Русский язык в контексте современной культуры: Тез. докл. междунар. науч. конф., Екатеринбург, 29—31 октября 1998г. -Екатеринбург: УрГУ, 1998. С. 64-66.
8. Карасик, В.И. Структура институционального дискурса Текст. / В.И. Карасик // Проблемы речевой коммуникации. Межвуз. сб. науч. трудов. -Саратов: СГУ, 2000. С. 25-33.
9. Карасик, В.И. Язык социального статуса Текст. Изд. 2-е / В.И. Карасик.- М.: ИТДГК Гнозис, 2002. 333 с.
10. Колтунова, М.В. Конвенции как прагматический фактор диалогического общения Текст. / М.В. Колтунова. М.: Академия гуманитарных исследований, 2005. - 228 с.
11. Леонтьев, А.А. К психологии речевого воздействия Текст. / А.А. Леонтьев // Материалы IV Всесоюзного симпозиума по психолингвистике и теории коммуникации. -М., 1972. С. 31-172.
12. Олянич, А.В. Презентационная теория дискурса Текст.: Монография / А.В. Олянич. М.: Гнозис, 2007. - 407 с
13. Петренко В.Ф. Структура сознания в речевом воздействии Текст. // Петренко В.Ф., Сорокин Ю.А., Тарасов Е.Ф. и др. Оптимизация речевого воздействия. -М.: «Наука», 1990. С. 18-31.
14. Поляков, А.В. Общая теория права Текст. / А.В. Поляков. СПб.: Юрид. центр Пресс, 2001а. - 642 с.
15. Тарасов, Е.Ф. К построению теории речевой коммуникации Текст. / Е.Ф. Тарасов // Теоретические и прикладные проблемы речевого общения / Отв. редактор А.А. Леонтьев. М.: Наука, 1979. - С. 5-147.
16. Тарасов, Е.Ф., Сорокин, Ю.А., Шахнарович, А.М. Теоретические и прикладные проблемы речевого общения Текст. / Е.Ф. Тарасов, Ю.А. Сорокин, А.М. Шахнарович / Отв. ред. А.А. Леонтьев. М.: Наука, 1979. -327 с.

17. Усманова, Е.Ф. Речевая коммуникация в юридической практике Текст.: дис. .  
канд. юрид. наук : 12.00.01. Саранск, 2005. - 188 с.